

իմացապէս, մա՛նաւանդ զինուորագրուելու այս չարիքին դէմ, որ գլխագրուած Տգիտութիւն կ'անուանուի: Որքան շատ տեսեր եմ Մաթիկէն ետք հզօր ու շքեղ սոփեստներ, որոնք թուրքէն կը սորվէին, որպէսզի այս ժողովուրդը լուսաւորեն ու ընկերվարական վարդապետութեանց ընդհանրացմամբ մը միանգամ ընդմիշտ արմատախիլ ընեն ազգը ազգին դէմ լարող մախանքը: Այս մտածումը Մաթիկին ուղեղին մէջ տակաւին խակ, աւելի յետոյ պիտի ընդունուէր ամերիկացիներէ, որոնց երանելի ուղեղին ծնունդն էր գիւտը հայ որբերուն արգիլել հայոց լեզուի ուսումը, հալածել անոր գործածութիւնը, արտօնելով որեւէ ուրիշ լեզու: Ասիկա ո՛չ միայն ինքնատիպ է իբր մտածողութիւն, այլեւ ահաւոր կերպով իրաւ: Նիր Իսթի պաշտօնեաներուն տեղեկագիրները պաշտպանած են այդ հրէշութիւնը ընկերութեան կեդրոնին, Ամերիկայի մէջ: Մաթիկ Մելիքխանեանց սոցիալիստ էր՝ յեղափոխական ըլլալուն չափ: Ու իր քարոզները կը շփուէին երկու աշխարհներուն հիմնական հարցերուն: Չէր գիտեր, թէ իր այս տեսութիւններով որքան կը հեռանար մենէ, որ թուրքը չէինք երեւակայեր, այլ կը շարունակէինք ինչ որ իրենք դադրած էին ընելէ «Կովկասում», այսինքն՝ կրել զայն, թուրքը, մեր ջիղերուն ճամբաներէն, թանձր, անխուսափելի շարաւի մը նման: Ընկեր Մաթիկը մեզի չափ ուժով ասելու անկարող ու անվարժ, պարտք ունէր, աւա՛ղ, երեւակայելու, երբ չէր անցած Սահմանէն: Նշանաւոր այդ հրուանդանը իմաստութեան ծովերուն: